ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ -

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ -

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾ -

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ / ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ –

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես հանդիսացել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը: Հայտնի է նաև, որ երեխաները ցանկացած պետության և հասարակության ապագան են: Եվ կախված նրանից, թե որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները, կանխորոշվում է նաև տվյալ պետության և հասարակության ապագան: Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են յուրաքանչյուր պետության կարևորագույն և առաջնային խնդիրներից:

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) 2015թ. առաջին անգամ սահմանադրական մակարդակով առանձնացվեցին և ամրագրվեցին երեխայի իրավունքների պաշտպանության երաշխիքները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում սահմանվեց, որ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ ընդունվել են բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնք կարևորագույն դրույթներ են պարունակում երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ, որոնց շարքում առաջնայինն ու կարևորագույնը 1989 թվականի նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան էր, որով հստակ ամրագրվեց երեխայի՝ որպես հատուկ սուբյեկտի կարգավիճակը: Ըստ էության, հիշյալ կոնվենցիան ստեղծեց երեխայի նկատմամբ վերաբերմունքի նոր մոդել, որը ելակետ հանդիսացավ ընտանիքում և հասարակության մեջ երեխայի կարգավիճակի փոփոխության համար: Միջազգային իրավական բազմաթիվ այլ ակտերով ևս ամրագրվեցին երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքները և չափորոշիչները, որոնց շարքում առանցքային նշանակություն ունի ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 բանաձևով ընդունված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները», քանի որ այն իրենում համապարփակ ձևով ներառում է հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների արդարադատությանը մասնակցելու հիմնարար սկզբունքները և երաշխիքները, որոնք ուղղորդող նշանակություն ունեն

քրեական վարույթ ներգրավված անչափահաս տուժողների և վկաների իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցում:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում ևս համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր, որն իրականացվում է տարբեր իրավական միջոցներով: Դրանց շարքում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն քրեաիրավական և քրեադատավարական պաշտպանության միջոցները, որոնց ուսումնասիրությունը և միջազգային չափանիշներին համադրությունը ցույց տվեց, որ առկա են մի շարք բացեր, հակասություններ և անորոշություններ, որոնք պարզաբանման և հստակեցման կարիք ունեն՝ ելնելով երեխայի լավագույն շահերի ապահովման հրամայականից:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն դասընթացը նպատակ ունի ունկնդիրներին ծանոթացնելու բռնության հասկացությանը և դրսևորումներին, դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության առանձնահատկություններին, ինչպես նաև ՀՀ-ում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության համակարգին, դրանում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցող դերակատարներին ու նրանց գործառույթներին, անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթի իրականացման ինչպես ներպետական օրենսդրությամբ ամրագրված, այնպես էլ միջազգային փաստաթղթերում նախատեսված հիմնարար սկզբունքներին, պահանջներին, հիմնախնդիրներին, ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված անչափահաս տուժողների իրավունքների ապահովման կառուցակարգերին քրեական գործի քննության տարբեր փուլերում և քննչական կամ դատավարական գործողություններ կատարելիս և որոշումներ ընդունելիս, ինչպես նաև ապահովել երեխաների մասնակցությամբ վարույթի արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ բազմակողմանի գիտելիքների և տեղեկությունների ստացումը, որոնց կիրառումն անհրաժեշտ է երեխաների մասնակցությամբ դատավարության արդյունավետ իրականացմանը:

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (նշել այն հիմնական գիտելիքներն ու/կամ հմտությունները, որոնց պետք է տիրապետի ունկնդիրը՝ դասընթացին հաջող մասնակցության դեպքում)

Մասնակցելով դասընթացին, ուսումնասիրելով առաջարկվող լրացուցիչ նյութերը և պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին՝ ունկնդիրը կկարողանա.

- ներկայացնել ՀՀ-ում երեխա տուժողների իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքը և համակարգը,

- բացահայտել «երեխայի նկատմամբ բռնության» հասկացությունը, դրսևորումները և դրանց բովանդակությունը,

- պատկերացնել երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,

- ճիշտ քրեաիրավական գնահատական տալ երեխայի նկատմամբ կիրառված բռնության դեպքերին,

- սահմանել «երեխայի լավագույն շահեր» հասկացությունը տուժողի տեսանկյունից և կիրառել «երեխայի լավագույն շահերը» գնահատելու ընթացակարգերը և գործիքակազմը,

- վեր հանել ՀՀ օրենսդրությամբ անչափահասին տուժող ճանաչելու դատավարական հիմքերը, անչափահաս տուժող հասկացությունը և հատկանիշները, տարիքային նվազագույն և առավելագույն շեմը և այլ հարցեր,

- գտնել անչափահաս տուժողների իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցերը կանոնակարգող միջազգային առանցքային փաստաթղթերը և կողմնորոշվել, թե առանձին հիմնախնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար ինչ միջազգային իրավական աղբյուրներից կարող է օգտվել,

- բացահայտել քրեական գործով վարույթի տարբեր փուլերում երեխաների իրավունքների ապահովման քրեադատավարական և միջազգային-իրավական երաշխիքները և կիրառել գործնականում,

- բացահայտելով բռնության ենթարկված երեխաների հարցաքննության հոգեբանական և դատավարական առանձնահատկությունները՝ պլանավորել և իրականացնել զգայուն հարցաքննություն,

- բացահայտել երեխաների մասնակցությամբ առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները և երեխաների իրավունքների և օրինական շահերի ապահովման կառուցակարգերը և գործնականում առաջնորդվել դրանցով,

- բացահայտել երեխաների մասնակցությամբ դատական վարույթի միջազգային-իրավական երաշխիքները և ապահովել դրանց գործնական կիրառությունը,

- գնահատել հանցագործությունից տուժած անչափահասի սոցիալական վերականգնման գործում սոցիալական աշխատողների ներգրավման կարևորությունը և հնարավորությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն առանցքային գաղափարները կամ թեմաները, որոնք ներկայացվելու են հեռաուսուցման դասընթացում. դրանք կարող են արտահայտված լինել դասընթացի ելքային արդյունքներում, բայց կարող են լինել նաև լրացուցիչ հասկացություններ)

Սույն հեռաուսուցման դասընթացի հիմնական գաղափարները ներկայացվելու են համապատասխան դասերի /շաբաթների համար նախատեսված նյութերում: Ստորև հաջորդաբար ներկայացված են յուրաքանչյուր դասի/շաբաթվա նյութերում տեղ գտած հիմնական գաղափարներին վերաբերող թեմաները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ + ԴԱՍ 1. Երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը և տեսակները

ԴԱՍ 2. Երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները

ԴԱՍ 3. Երեխաների նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումների քրեաիրավական բնութագիրը

ԴԱՍ 4. Բռնության ենթարկված երեխային տուժող ճանաչելու հիմքերը, պայմանները և դատավարական կարգը

ԴԱՍ 5. Երեխաների իրավունքների ապահովման հարցերը քրեական գործ հարուցելու փուլում

ԴԱՍ 6. Երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով քննության սկզբնական փուլում իրականացվող քննչական և դատավարական այլ գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները և դրանց կատարման համատեքստում երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերը

ԴԱՍ 7. Բռնության ենթարկված երեխաների հարցաքննության առանձնահատկությունները

ԴԱՍ 8. Անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիքները քրեական դատավարությունում

ԴԱՍ 9. Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս

ԴԱՍ 10. Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (նշել այն մեթոդները կամ միջոցները, որոնց կիրառումը կնպաստի հեռաուսուցման դասընթացի բովանդակության հասկացմանը: Օրինակ՝ վարժություններ, ինտերնետ ֆորումներ, վիրտուալ քննարկումներ և այլն:)

Հեռաուսուցման դասընթացների պատշաճ հասկացման համար կիրառական նշանակություն ունի ինքնաստուգիչ հարցերի և առաջադրանքի մշակումն ու ներդնումը: Ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու և առաջադրանքը կատարելու միջոցով ունկնդիրները հնարավորություն են ստանում առավել խորությամբ հասկանալ ինչպես համապատասխան տեքստը, այնպես էլ դրա կիրառական արժեքը (օրինակ՝ առաջադրանքի պատշաճ կատարման համար տեքստի հասկացումը պարտադիր է): Սույն հեռաուսուցման դասընթացի համար նախատեսվում է ինքնաստուգիչ հարցերի՝ որպես նյութի ընկալմանը նպաստող մեթոդի/միջոցի կիրառումը:

ՏԵՍԱԶԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (Նշել հեռաուսուցման դասընթացի իրականացման համար անհրաժեշտ տեսաձայնային սարքավորումները: Օրինակ՝ համակարգիչ, պրոյեկտոր, DVD և այլն)

Հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ են՝

1. Համակարգիչ (ունկնդրելու հարմարություններով)
2. Համացանց մուտք գործելու հնարավորություն

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ (նշել այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են հեռաուսուցման դասընթացի յուրացման համար)

Տվյալ դասընթացի թեմաների յուրացման համար անհրաժեշտ են իրավագիտության, մասնավորապես՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության ոլորտի հիմնարար գիտելիքներ:

ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հեռաուսուցման դասընթացի ժամանակացույցը մանրամասն ներկայացված է ուսումնական պլանում: Հեռաուսուցման դասընթացի ընդհանուր տևողությունը 10 շաբաթ է (յուրաքանչյուր շաբաթ 4 ժամ ծավալով, ընդհանուր 40 ժամ ծավալով):